«Մարզական, մշակութային և օրենքով չարգելված այլ զանգվածային միջոցառումների անցկացման ժամանակ (բացի բարեգործական և պետական մարմինների կողմից իրականացվող միջոցառումներից) պայմանագրային հիմունքներով ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման, տրանսպորտային միջոցների հաշվառման մեծ պահանջարկ ունեցող, ինչպես և ցանկալի համարանիշերի տրամադրման, արգելանքի տակ դրված տրանսպորտային միջոցի՝ հատուկ տարածքում պահպանման, տրանսպորտային միջոցի հաշվառման վայրից դուրս՝ սեփականատիրոջ (լիազորված անձի) նախընտրած վայրում տրանսպորտային միջոցի հաշվառման գործողության համար գանձվող վճարների չափերը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N ___-Ն

ՄԱՐԶԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՕՐԵՆՔՈՎ ՉԱՐԳԵԼՎԱԾ ԱՅԼ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ (ԲԱՑԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՑ) ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԵԾ ՊԱՀԱՆՋԱՐԿ ՈՒՆԵՑՈՂ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՑԱՆԿԱԼԻ ՀԱՄԱՐԱՆԻՇՆԵՐԻ

ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ԱՐԳԵԼԱՆՔԻ ՏԱԿ ԴՐՎԱԾ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ՝ ՀԱՏՈՒԿ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՅՐԻՑ ԴՈՒՐՍ՝ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ (ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁԻ) ՆԱԽԸՆՏՐԱԾ ՎԱՅՐՈՒՄ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ոստիկանության մասին» օրենքի 40.1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել մարզական, մշակութային և օրենքով չարգելված այլ զանգվածային միջոցառումների անցկացման ժամանակ (բացի բարեգործական և պետական մարմինների կողմից իրականացվող միջոցառումներից) պայմանագրային հիմունքներով ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման, տրանսպորտային միջոցների հաշվառման մեծ պահանջարկ ունեցող, ինչպես նաև ցանկալի համարանիշների տրամադրման, արգելանքի տակ դրված տրանսպորտային միջոցի՝ հատուկ տարածքում պահպանման, տրանսպորտային միջոցի հաշվառման վայրից դուրս՝ սեփականատիրոջ (լիազորված անձի) նախընտրած վայրում տրանսպորտային միջոցի հաշվառման գործողության համար գանձվող վճարների չափերը՝ համաձայն հավելվածի։
2. Սահմանել, որ որոշման հավելվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված ծառայությունները պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին չեն մատուցվում (տրանսպորտային միջոցների հաշվառման մեծ պահանջարկ ունեցող, ինչպես նաև ցանկալի համարանիշներ չեն տրամադրվում), իսկ որոշման հավելվածով սահմանված մյուս ծառայությունները պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին մատուցվում են անվճար։
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

Ն.ՓԱՇԻՆՅԱՆ

«___»_____2020թ.

ք. Երևան

Հավելված

ՀՀ կառավարության 2020 թվականի

___-ի N _____-Ն որոշման

ՄԱՐԶԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՕՐԵՆՔՈՎ ՉԱՐԳԵԼՎԱԾ ԱՅԼ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ (ԲԱՑԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՑ) ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԵԾ ՊԱՀԱՆՋԱՐԿ ՈՒՆԵՑՈՂ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՑԱՆԿԱԼԻ ՀԱՄԱՐԱՆԻՇՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ԱՐԳԵԼԱՆՔԻ ՏԱԿ ԴՐՎԱԾ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ՝ ՀԱՏՈՒԿ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՅՐԻՑ ԴՈՒՐՍ՝ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ (ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁԻ) ՆԱԽԸՆՏՐԱԾ ՎԱՅՐՈՒՄ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ

NN	Ծառայության տեսակը	Վճարի չափը
1.	Մարզական, մշակութային և օրենքով չարգելված այլ զանգվածային միջոցառումների անցկացման ժամանակ (բացի բարեգործական և պետական մարմինների կողմից իրականացվող միջոցառումներից) պայմանագրային հիմունքներով ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար	մեկ կարգախ թվում՝ ոչ լրի ուղեկցման դ 1 կմ-ը՝ 500 դ
2.	Տրանսպորտային միջոցների հաշվառման մեծ պահանջարկ ունեցող համարանիշերի տրամադրման համար	60.000 դրամ 100.000 դրա 150.000 դրա 250.000 դրա 400.000 դրա 500.000 դրա 600.000 դրա 1.000.000 դր 1.500.000 դր 2.000.000 դր 3.000.000 դր

		5.000.000 դրամ
		8.000.000 դրամ
3.	Տրանսպորտային միջոցների ցանկալի համարանիշերի տրամադրման համար	36.000 դրամ
4.	Արգելանքի տակ դրված տրանսպորտային միջոցի՝ հատուկ տարածքում պահպանման համար	Յուրաքանչյուր օրենքով սահմանված աշխատավարձի (500 դրամ)
5.	Տրանսպորտային միջոցի հաշվառման վայրից դուրս՝ սեփականատիրոջ (լիազորված անձի) նախընտրած վայրում տրանսպորտային միջոցի հաշվառման գործողության համար	100.000 դրամ